

Ք Ա Ր Ո Ջ
(29 նոյեմբերի 1987 թ.)

«Օրհնեսցի և պահպանեսցի Հանրապետութիւն և Հայրապետութիւն Հայոց» (Ժամագիրք):

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, այսօր նոյեմբերի 29-ն է, հայ ժողովրդի վերածննդի տոնը, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման օրը: Այսօր մենք, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ու ժողովուրդը, արդար հպարտութամբ ճշում ենք մեր այդ վերածնունդը՝ տեղի ունեցած 1920-ին, որի համար էլ քիչ հետո, նախագահությամբ Նորին Ս. Օծուխուն Ս. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, տեղի պիտի ունենա մաղթանք Հանրապետական:

Իրոք, այսօրվանը այդպես բացառիկ է՝ ցնծագին տոն, ամեն ինչով ոգեկան ու հոգեկան, գուցեն մի քիչ առավել, քան այլ ժամանակ, հավատքի ազատ պաշտամունքի պայմաններում: Եվ ահա, գուցե սա է, որ, ավելի քան այլ ժամանակ, մենք գիտակցում ենք ու հաստատում դարձյալ, թե մեր հայրենի վերածնունդը, որպես համազգային տոն, առանց հորելյանական փնելու, այդպես բացառիկ է:

Այո, բոլորին է հայտնի, որ մեր անցյալի պատմությունը եղել է շատ տխուր, շատ անմխիթար, քան այն լույս օրերը, որ հաջորդեցին Ս. Սահակի և Ս. Մեսրոպի սըխրանքին: Հարյուրավոր տարիներ իր պետականությունից զրկված մեր ժողովրդին եթե տեղ չկանգներ մեր Եկեղեցին, եթե վերջինս չմտածեր որք մնացած իր գա-

վակաների մասին, ավելի ծանր կորուստ էր սպասում մեզ: Անցյալում մեր Եկեղեցին, մեր կաթողիկոսները դարձան անթագ թագավորներ, որպեսզի մենք չկորչենք և հասնենք մեր վերածննդյան այս օրվան: Հիշենք միայն 1915-ն և թվականը: Սակայն, բարեբախտաբար, Աստված լսեց մեր աղոթքը և մեզ հաղթանակ տվեց Մարդաբախտով 1918 թվականին, ապա և՛ 1920 թվականի Նոյեմբերյան լուսաբացը: Այս բոլորը մենք չենք կարող չհիշել և հիշում ենք նրա համար, որ այսպիսի նվիրական օր բազմապատկվի մեր ուրախությունը և ընդգծվի մեր մխիթարությունը գերեզմանված վիճակից դուրս գալու համար: Ո՛ւմ հայտնի չէ, որ խաչված էինք Քրիստոսի պես, համարյա թաղված, սակայն մեր Փրկչի պես էլ հարություն ենք առել այսօր, քանզի այս դեպքում էլ մեր վաղվա լուսավոր գալիքի հավատքն էր և լավատեսությունը վաղվա նկատմամբ. «21-ատ, այլ յարեաւ»: Հարչալ մեր ժողովուրդը, որով և վերջնականապես պատրույց խաբված մեր ժողովրդի պարտամորհակը:

Ծառագեց լույսը փրկության, և, ինչպես ասում է քանաստեղծը, իր մութ ձորերում շունչը չփչեց հայրենի երկիր Հայաստանը: Այսօր արդարորեն տեղին է ընդգծել, որ այս մեր զանգվածի (հայրենիք և ժողովուրդ) երևույթի մեջ դրված է նաև թթխորը մեր Սուրբ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի, ի խնդիր համազգային

մեր մխիթարանքի և ուրախության, որպես հաց հոգևոր. Հայաստան,

«Դու իմ արյունն ես և իմ այրումը,
Ինչ որ ես ունեմ՝ քոնն է և իմը,
Դու իմ օջախն ես, իմ ծուխն ու հուրը,
Դու և իմ տունն ես, և իմ տան հիմքը»:

(Բողոքան Զանյան):

Փառք մեր հայրենիքին, վերածնված մեր Սուրբ Եկեղեցուն Հայաստանյայց և Սուրբ Էջմիածնին Ամենայն Հայոց: Փառք նաև մեր երանաշնորհ հայրապետներին, որոնք մեզ սովորեցրել են ջերմապես սիրել հայրենին, դառնալ գինվորը նրա, և երբ խոսքը մեր սուրբ հողի մասին է, պաշարել մինչև վերջ և նույնիսկ զոհել մեր կյանքը, եթե դա անհրաժեշտ է, որովհետև՝ «հայրենի հողը օտարի ոսկուց էլ թանկ է»:

Այո, մեր հավատը մարդասիրությունն է, սիրելի հավատացյալ ժողովուրդ, որի չափանիշն է մեր հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը: «Սիրիր եկեղեցիդ»՝ ուսուցանում էին մեր մայրեր, բայց երբ բացակա է այդ սիրուց նաև հարգանքը և վերաբերմունքը դեպի հայրենիքը, այդ սերը պակասավոր է:

Հավատացյալի համար հարգանքը և սերը դեպի իր հերոսները և նահատակները նաև քրիստոնեական է:

Մեզանից ամեն մեկը պետք է ասի՝ ես իմ մորը սիրում եմ, ոչ թե նրա համար միայն, որ նա գեղեցիկ է, այլ որովհետև նա իմ մայրն է, անկախ նրա գեղեցկությունից:

Այդպես է և մեր հայրենիքը, ու դեռ ավելին. սիրում, փարվում ենք նրան, որպեսզի նա դառնա հզոր, առաջավոր, ինչպիսին է նա այսօր՝ լիիրավ մեկ անդամը Սովետական մեծ Միության:

«Դու մի բուռ, մի ափ,
Դու մի սրտի չափ,
Դու սրտի պես լայն,
Դու սրտի պես խոր,
Հայրենի իմ հող»:

(Մ. Մարգարյան):

Վաթսուկդոդ տարի է անցել հայրենի մեր վերածննդից: Ինչպես տնտեսական, գիտական, մշակութային և շինարարական ու այլ բնագավառներում հաջողության է

հասել մեր երկիրը, նման հաջողություն է արձանագրել նաև մեր Ս. Եկեղեցին և այն էլ հատկապես վերջին երեսուն-երեսունհինգ տարիների ընթացքում:

Այդ հաջողությունները ակնբախ են մանավանդ՝ Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա կաթողիկոսի հայրապետության շրջանին, հաջողություններ, որոնց ձեռքբերման մեջ մեծ է դերը մեր հայրենի բարեխնամ կառավարության բարոյական օժանդակության:

«Օրհնեսցի և պահպանեսցի Հանրապետություն և Հայրապետություն Հայոց»: Թող օրհնվեն նրանք նոր փայլով, նոր հաջողությամբ և նոր երազներով:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր ժողովուրդին փառք բերած աննախընթաց նվաճումները, բնականաբար, հնարավոր չէին լինի, եթե չլիներ այն խաղաղ պայմանները, որոնց մեջ ապրեց և ստեղծագործեց մեր շինարար ժողովուրդը:

Եվ այսօր հատկապես այս մասին պետք է մտածել, աղոթել և գործել: Այսօր մի մարդ սպանելու համար հարյուրավոր գեներ կան աշխարհում: Պետք է աղոթել, որ Քրիստոսով աշխարհ բերված խաղաղությունը տիրական դառնա համայն աշխարհում: Պետք է ձգտել և աշխատել, որ մարդկանց եղբայրությունն ու ժողովուրդների բարեկամությունը ամրապնդվի և դառնա հավերժական, որ խաղաղություն լինի թե՛ հեռավորաց և թե՛ մերձավորաց համար:

Այս չէ՝ արդյոք Ս. Պողոս առաքյալի մեծ երազանքը, երբ նա Հռոմեացվոց ուղղված իր թղթի ԺԵ գլխում խաղաղությունը և ուրախությունը զուգորդում է միմյանց:

Ով-ով, բայց մենք՝ հայ ժողովուրդ և Հայաստանյայց Եկեղեցի, անցյալում այնքան ասպատակություններ տեսած, պետք է թանկ գնահատենք թե՛ հայրենասիրությունը, թե՛ մարդկանց բարեկամությունն ու եղբայրությունը, որպեսզի դրանց կենարար ճառագայթների տակ իրականանան նաև մեր Աստվածահաճո երազանքները:

Փա՛ռք Ամենակալին՝ մեզ արված բոլոր շնորհաց համար:

Կեցցե՛ մեր վերածնված Մայր Հայրենիքը:

«Ընդհիմ, սեր և խաղաղություն Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ, ամեն»: